ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 1714-Ա « 07 » մայիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՐՅՈՒՍԵԼ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հաշվի առնելով «SNIBE CO., LTD» ընկերության կողմից ստացված հրավերը և աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դ. Կարապետյանի 30.04.2025 թվականի №Ն/22737-25 գրությունը՝ երկկողմ համագործակցության հարցեր քննարկելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2025 թվականի մայիսի 18-ից 23-ը ներառյալ գործուղել Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսել հետևյալ կազմով.

Դավիթ Կարապետյան	Աշխատակազմի առողջապահության վարչության պետ
Հովհաննես Զոհրաբյան	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3.Աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի բացակայության ընթացքում առողջապահության վարչության պետի պարտականու-թյունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Անահիտ Չարխիֆալաքյանին:

4.«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի բացակայության ընթացքում «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտակա-նությունների իրականացումը վերապահել նույն բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ Սեյրան Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ